ՄԻՐ 192 1881 ՀՈՒԼԻՍ ԻՆԳՏԵՄԲԵՐԻ 26 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Լոյսը մի հրաշաւոր Հոգեբարբառ է ոգիների. Նա ոչ միայն ցերեկուայ ժամերում է մեզ հետ, այլ և գիշերուայ խաւարի մէջ, երբ մենք քնած ենք և մեր հոգին հանգստանում է մարմնի հետ միասին։ Ամէն գիշեր, երբ մենք քնում ենք, մեր հոգին ազատ է լինում մարմնի կապանքներից և թռչում է դէպի այն աշխարհը, որտեղից եկել է։ Այդ աշխարհում նա տեսնում է իր նախնեաց հոգիները, որոնք ապրում են նոյն կեանքով, ինչով ապրում էին մարմնի մէջ։ Հոգին տեսնում է նաև այն հոգիները, որոնք դեռ չեն մտել մարմնի մէջ, որոնք դեռ պիտի գան այս աշխարհը։ Հոգին տեսնում է նաև Աստուծոյ հրեշտակներին, որոնք նրան ուղեկցում են դէպի Աստուծոյ գահը։ Հոգին տեսնում է նաև Աստուծոյ գահը։ Հոգին տեսնում է նաև Աստուծոյ գահը։ Հոգին տեսնում է նաև

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Օրատոմար Ղազարյանի հետ զրույցը վարեց Ռուբեն Ղազարյանը

— Ինչպե՞ս որոշեցիք ձեռնամուխ լինել հայ ժողովրդի պատմության հարցերի ուսումնասիրությանը, ի՞նչ էր ձեզ մղում դրան, ի՞նչ նպատակ էիք հետապնդում։

— Ես ծնվել եմ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտ շրջանի Ծամձմուր գյուղում։ Մանկությունս անցել է հայրենի գյուղում, ապա Ստեփանակերտում։ Ինչպես հայ ամեն մի երեխա, ես էլ մանկուց սիրում էի հեքիաթներ լսել, կարդալ։ Հետաքրքրվում էի հատկապես հին ժամանակների մասին պատմություններով։ Ինձ հետաքրքրում էր, թե ինչպես են մարդիկ ապրել, ինչպես են ստեղծվել տարբեր ազգերը, ինչպես են զարգացել։ Ավելի ուշ, երբ սկսեցի ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը, ինձ համար պարզ դարձավ, որ հայ ժողովրդի պատմությունը ամենահետաքրքիրն է, ամենաբովանդակալիցը։ Հայ ժողովրդի պատմությունը ամենաշատ հարցերն է պարունակում, որոնք ինձ հետաքրքրում էին։ Ես ուզում էի իմանալ, թե ինչպես է ստեղծվել հայ ժողովուրդը, ինչպես է ձևավորվել հայ մշակույթը, ինչպես է զարգացել հայ ժողովրդի պետականությունը, ինչպես է հայ ժողովուրդը պայքարել իր անկախության համար։ Ես ուզում էի իմանալ, թե ինչպես է հայ ժողովուրդը ստեղծել իր հոյակապ մշակույթը, ինչպես է ստեղծվել հայ գրերը, ինչպես է զարգացել հայ գրականությունը, ինչպես է զարգացել հայ ճարտարապետությունը, ինչպես է զարգացել հայ գիտությունը։ Ես ուզում էի իմանալ, թե ինչպես է հայ ժողովուրդը ապրել, ինչպես է աշխատել, ինչպես է ստեղծագործել

կ'զբաղի, բոլորովին համաձայն իւր հիմնադրին՝ զոր բացատրած է իւր դահակալութեան առթիւ ըրած ատենաբանութեանը մէջ։

Ո՛հանք զարմանալի առարկութիւն մ'ալ կընեն, կըսէ արդոյ յօդուածագիրն, այն է թէ՝ վերադարձողներն Ազարեան Սրբազան ինչո՞ւ առանց պայմանի ընդունեց։

Ինչո՞ւ կուզեն ատոր պատասխանատուութիւնն Ազարեան Սրբազանի վերագրել, որ Հոռոմոյ Ս. Քահանայապետին հրահանգովը ընդունած է զանոնք, որովհետեւ վերադարձողք ուղղակի Ս. Պապին դիմած էին և Ս. Պապը ալ ներողութեամբ վարուած է իրենց հետ։

Եւ ինչ կուզէին, կուզէին որ Ազարեան Սրբազան անդրլեռնական սկվռունքո՞վ չարժէր այսպիսի ժամանակ մը՝ ուր գաղափարաց յառաջադիմութիւնը մեծ քայլ առած է։ Ազարեան Սր. անդրլեռնականութեան բարեկամ չէ. լուսամիտ և հասկցող անձ մ'է, որ կը յարգէ ժամանակիս առողջ և լուսաւոր գաղափարներն և ահա այս պատճառաւ է նաև որ ազգային միութեան գեղեցիկ գաղափարին տարածմանն ալ արգելք չէ, ընդհակառակն՝ սիրող և յարդող է։

Յօդուածագիր էֆէնտին կը վերջացընէ իր խօսքն ըսելով՝ «Թողունք փիլ մ'ալ հակառակասիրութեան ոգին և միաբան գործակցութեամբ աշխատինք յօգուտ ազգային յառաջադիմութեան, որ ժամանակիս անյեղլի պահանջումն է, և օգուտ քաղենք Ազարեան Սրբազանի պաշտօնավարութենէն, որ գեղեցիկ յատկութիւններով օժտեալ և լուսամիտ անձ մ'է»։

Մենք դիտողութիւնն յայտնեցինք թերեւս։

ԲԺՇԿԱԿԱՆ

—

Ամէն առաջ Գլխու և Ակռաներու վերաբերեալ առողջապահական կանոններուն հրատարակմանն առթիւ խոստացած էինք, որ երեսի ներկերուն և փոչիներուն մէջէն աւելցն անվնասներն ու օգտակարներն, նաև չունչի գարշահոտութիւնը փարատելու համար ինչ ինչ օգտակար բաղադրութիւններ հրատարակեմք ուրիշ պատեհութեամբ մի։ Ահա այս անգամ մեր խոստումը կը կատարեմք երեսի ներկերէն և փոչիներէն սկսեալ։

Ինչպէս որ ըսած ենք արդէն առողջապահական կանոնաց մէջ, հրապարակին վրայ այլեւայլ փայլուն ութդոսներով ծախուած սպիտակ անգոյներուց (ֆ։ըֆ) ընդհանրապէս կապարի (ֆոռըյոռ) կամ պիջ-ֆ-ին, պոռէնի կամ պինկի աղերէ և մինչև անգամանդ կի կրկնաքլորիդէ (գազ.պի։լօռիտօռը պօռէյոռ, տճկ. պի։լէմէն) կը բաղկանան, որոց ամենն ալ մարմնին քիչ չատ վնասակար և չատ անգամ ալ առողջութեան համար խիստ վտանգաւոր են, որովհետեւ դէմքին թարմութիւնն ու թաւշանման կակղութիւնը (վէլը։ֆէ) կ'աւրեն և ժամանակէ մը հոգը ոչ միայն մարմնին վերնամաշկը (էփիտէռ) կը դեղնցուննեն, այլ նաև երեսին վերայ, մանաւորապէս քթին թևերուն (քթին ծակին դրսի երկու քովերը) վերոյ կորեկանման (պօռըէ պէս) փոքրիկ սև կիտանիշներ և ելունդներ (ֆապօռճըէ) երևան կը հանեն և առողջութեան մասին ալ՝ մեծաղեայ չտանդ աղիները մարմնոյն ծակիքներուն մէջ մտնելով գլխու, ատամնոքի ցաւեր կը պատճառեն, աչացաւութեանց, ականջի ցաւերու, ակռաներուն փտութեանը ևայլն ևայլն տեղի կուտան. ուստի կոպտելագոյն անքնա միակ սպիտակ սընտոցն է գայլախոպի անդոյրը (պլան պը ռիլ) որուն պատրաստութիւնը լաւ յայտնելու համար թէ խիստ երկար և թէ խիստ դըժուար ըլլալուն, անուշահոտութեանց վաճառականութեան չգար որ աժան գնով վաճառէ, այս պատճառաւ է որ հրապարակին վերայ ալ երբէք չդտնուիր։ Սոյն անդոյրը մարթը կը մաքրէ, կը կակղացունէ և խորտուբորդութիւնները կը հարթէ, կը չակէ. պատրաստութիւնն ալ հետևեալ կերպով կըլլայ։

(Շարունակելի)

ՏՕՔԹ. Ֆ. Ց. ՄԱԼԷԶԵԱՆ

—

Տէր Խրիմեան.

Ի պատասխանի Ձեր մէկ հարցման, պարտք կը համարիմ պատասխանել իբր մին յանդամոց հիմնադիր և անօրէն ժողովոյ, թէ Պէշիկթաշի Հայկազեան ընկերութիւնը բաւական գրեանք և պատրաստ դրամ ունի այժմ չահու տրուած, բայց վերջի ատեններս Ազգ. վարժարանաց յանախ փոփոխութեան ենթակայ եղած դասագրքերուն պատճառաւ, հիմակուհիմա կ'ըսպասէ որ երբ նոր ինչ ուղղութիւն ունենան վարժարանք, այն ժամանակ Ընկերութիւնս դարձեալ ազգին դաստիարակութեան գործին օգտակար ըլլայ, ինչպէս որ եղած է երբեմն։

Ընդունեցէք յարգանքս

Ց. ԵՍՄԷՆԻՃԵԱՆ

Կ. պոլիս, 22 սեպտ. 1880

Խմբագիր Տէր.

Հանդուցեալ Եղիազեան Յակոբ Աղայի Ազգային Հիւանդանոցի հաստատութեան կանոն (350) հինգ հարիւր յիսուն հատ, «Պօն ըը Թրէզօր»ը, այս անգամ Հոգաբարձութիւնս ամբողջապէս ընդունեց նոյն ժառանգորդք Համեստաւոյլ Տիկին Զիւմբիւլ Շիրինեան և Մեծարգոյ Կարապետ Աղա Եղիազեանէ, ձեռամբ Մեծ. Գալչընեան Պապիկ և Ուզունեան Մկրտիչ էֆէնտիներու, որոյ համար Հոգաբարձութիւնս յանուն անդ. թղթատար պատասխանելոց իւր խորին շնորհակալիքը կը փութայ յայտնել հրապարակաւ։

Մնամք յարգանօք

Ի դիմաց Հիւ. Հոգաբարձութեան

Ա. ՖԷՆԷՐՃԵԱՆ — Մ. ՑԱԿՈԲԵԱՆ

Գրաս. Ագգ. Հիւ. Մեծ նոր խան թ. 49

24 սեպտ. 1881

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հետեւեալ պաշտօնագիրը ձեռքերնիս ուշ հասնելուն համար այսօր կրցինք հրատարակել։

. . . Էֆէնտի

Ազգային ժողովոյ ունկնդրաց հանգըստութեան համար Մայր Դիւանի անօրէնութեամբ և վարչական խորհրդոյ համաձայնութեամբ որոշուած է որ ժողովոյն չըրջանակի ազատումն առաջին մասը յատկանայ եկեղեցական, նախկին երեսփոխան և ազգային պաշտօնեայ ունկնդրաց հրաւիրելոց և օտարազգեաց, երկրորդ մասն ալ տիկնանց և օրիորդաց, նմանապէս չրջանակին ձախակողմը ժողովրդեան։

Եւ որպէս զի տեղւոյն բաւականութենէն աւելի թուով ունկնդիրք չխանութին, յատուկ տոմսակներ տրուին ունկնդրաց որոցմէ մին մի երեսփոխան մէկ հատ պիտի ունենայ իւր արժան դատած անձին տալու համար և որոշեալ թուով տոմսակներ ալ Դիւանին հսկողութեան ներքեւ ժողովատեղւոյն դուռը պիտի տրուին ունկնդրել փափաքողաց նիստին բացուելէն կէս ժամ առաջուընէ սկսեալ։

Զայս ի գիտութիւն երեսփոխանաց և ժողովրդեան հրատարակել խնդրելով,

22 Սեպտ. 1881 Մնամ աղօթարար

ի Պարիրքն Հայոց Պարիրքին. Փխնրդ.

Գաւմ—Գաբու Գէորգ Ն. Վ. Բաճաքեան

—

Ա Զ Դ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿ.

(Ն. Տէր Ղեւոնդեանցէ)

ՄԱՑՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դ. Հատոր

Սոյն դասագրքին Դ. և վերջին հատորն ալ ի լոյս ընծայուած է, Պօլսոյ աշխարհաբառի վերածուած և ընտիր տպագրութեամբ։ Գին 5 գահեկան արծաթ։

Կեդրոնատեղին է Միացեալ ընկերութեանց գրասենեակը, Կալաթա, Քէօյք—Օղլու խան, թիւ 11—12—13։

Կը գտնուի Պօլսոյ բոլոր հայ գրավաճառաց քով, նաև Կալաթա, Պ. Ց. Զաքըրեանի Հայկական թղթավաճառանոցը։

Դպրոցաց համար մասնաւոր զեղչ կընկրուի։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

—

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑ

Առ Ց. Մ. (ի Մեծ—կղզի). — կարծիքներն հաշտեցնելու համար քիչ մը դուն տատիս ըրէ, քիչ մ'ալ Տ. Տ. և Տ. . . . ներդը տատիս ընէն, և ահա անատեն գործը կը պրծնի։

Առ Կ. Ս. Ի. (ի Պէշիկթաշ). — Թօսիլը «մընօփոլ» ընողներուն դէմ բողոքելու մեծագոյն իրաւունք ունի. ուստի ի գիտութիւն կը ծանուցանեմ որ բողոքդ արձանագրուեցաւ։

Առ Մ. Զ. (Պէշիկթաշ). — Դուն ինչպէս կ'ըմբռնես։

Առ Պ. Է. (ի Գնալը կղզի). — Անթոռդ գլուխդ կը փնտռէ։

Առ Ա. Ց. Ա. (ի Գատը քէօյ). — կուգես նէ ժողովին «նօթիսթ» ընենք, որովհետև քեզի չատ աղէկ պիտի յարմարի։

Առ Ց. Ե. (ի Գնալը կղզի). — Ըսէ նայինք, ժողովին վիճակն ինչպէս չափեցիր ու ձևեցիր։

Առ Կ. Ց. Փ. (ի Գալաթիա). — Թէ որ սա 20 տարուան բռնութիւնը վանես, գլուխդ աշխարհական կալծոպիկոս կընենք։

Առ Պ. Պ. (ի Բերայ). Լեզուդ բացուելու համար Ֆերիքէօյի կիւրճիներուն հրաշագործ եկեղեցին ուխտի գնա։

ՄԱՍՆԱԻՈՐ ԱԶԴԵՑ

Առ Ն. Բ. (Ցիւսկիւտար). — Աչուընիդ պրէ որ աղէկ տեսնաս։

Առ Ս. Գ. (ի Բերայ). — Ականջդ քիչ մ'ալ էախդ ձգէ։

Առ Լ. Ղ. (ի Պեօյիւքտէրէ). — Թէ որ կուզես մէյմէկ ակնոց ալ ոտքերուդ ծայրը անցուր։

Առ Ց. Փ. (ի Գատըքէօյ). — Տն. * * * ի նամակներդ խիստ քաղաքավարական են։

Առ Պ. Թ. (Յօրթաքէօյ), ճանրան գայած ատենդ «բատրիլ» մի՛ խաղար։

Առ Վ. Հ. (ի Թարլա պաչի). — «Սուարէ տանտանի» առեն կայ տահա։

ԵՍ

—

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԽՄԲԱԳԻՐ ՏԷՐ

Անցեալներդը կը ծանուցանէիր թէ, այսուհետև «Տ. Արքիլօքոս և. ըստ առաջնոյն պիտի չարունակէ դրել իր զուարճալիքը»։ Իրը թէ բան մ'ըլլար, լինչէ լուսաբարին ըսածին պէս «ծաղավարին թապախն ալ անտես մի առնէք,» այսպէս ալ քաղաքավարական ձևերն ալ երբեմն անտես չառնելու է. ասոր հետ մէկտեղ, ես ձեր առիս ուղղած նոյն ազգարարութիւնը ոչ իրրև այլ լինչ, այլ ի խրախոյս կընդունիմ և ի քաջալերութիւն և ետևէ կըլլամ աւելի համով բաներ վիճտռելու և ահա կրկին՝ Զաքըրեանէն սիփտահ ընելու համար տասը փարայի առած գրիչս սրելով, կիյնամ օռթան կամ գլուխներ կը պատռտեմ կամ գլուխս կը կոտրի։

Լաւ. լինչ գրեմ, ո՞րկէ սկսիմ, այդ է գժուարը.

Այսինքն, գրել ըսելով, ես քանի մը տեսակ կը հասկնամ.

Գրել՝ շողոքորդելու համար, կեղծաւորելու համար, հաճոյանալու համար և այս երեքը կամ երեքին նմանները գումարելով՝ ապրելու համար։ Աստուած չընէ, ես ասանկ բան ինձի համար պիտի ոչ բրած ունիմ և ոչ ալ կընեմ. կամ թէ գրել վերիններէն հաճիճ կերպով քաղաքավարութիւնը տեղը տանելու համար, կամ այնպիսի երկդիմի ձևովմբ որ ոչ օճառին տպնի և ոչ աճառին. է՛հ. . . այս ձևն ալ տարին մէկ անգամ կուտուի, բայց ես այս ձևէն ալ չեմ ախորժիր։

Ուսոի գրել ճշմարտութիւնը, արդարութիւնը, ուղղութիւնը. ահաւասիկ գրելու բան, բայց տէ՛ նայինք, գրէ՛ տեսնեմ. . . խենդ ես, աղքատեաց ես, հայհոյիչ ես, բարբարոս ես, անպատիւ ես և չատ բան ես. բայց ներեցէք մինակ ես ու դուն չենք, «ի սկզբանէ արար Աստուած» էն սկսելով մինչև ցայսօր և ատկ մինչև յաւիտեան խենդ էին, խենդ ես՝ ղանք, խենդ պիտի ծնան, ևլն. էին ևլն. եղանք ևլն. պիտի ծնան։

Եւ ոչ միայն այսքան, եթէ յամառ ես. եթէ չարունակես, և եթէ Աստուած մի՛ արատցէ, կէչինմէդ ալ ապահովալ չէ և ասկէ անկէ կ'ապատես, ահա ո՛վ ապշութեանս. . . կը տեսնես սա դադափները, զորս 5000 հոգի կը տանին, ատոնք իրենց յամառութեան մէջ չարունակող խնդերը են, որոնք անօթի ու երեսանկեալ վիճակի մէջ մեռած են, այլ հէնց հոգինին վչնցին ու պրծաւ, այն բոպէին դրանք յայտնուեցան թէ ուղիղ, ճշմարիտ, խելացի, աղգասէր և ևլն. մարդիկ էին և մեղք որ իրանց յարգը չճանչցաք. . .

Ուսոի խրատս մէջ տուր, ի՞նչ ընենք օ՞ր ճամբէն երթանք. . . չըսե՞ս. . . չխօսի՞ս . . . հասկցայ ելո՛ նորէն խելք խելքի տանք մեր գիտցած ճամբէն երթանք, ամա ծայրը անօթի գերեզմանի կերթայ եղեր, է՛հ ինչ հոգդ, դուն ալ անգին ու պատմութեան մէջ կուշտ ու կուր կապրիս. իսկ թէ այդ երկու տեսակ ապրելուն մէջ ինչ անհուն տարբերութիւն կայ և մինը միւսէն փառաւոր, այդ հաչիւը ուրիշ անգամի թողունք. հիմա նստէ սա ըսելիքներս մտիկ ըրէ։

—

Ամէնէն առաջ արդարութեան պարտք մը կատարած ըլլալու համար կը յայտնեմ թէ տակէ առաջ խոստիւղի սարկաւագի մասին երկտող մը նուիրելով բաւած էի թէ կռուի մէջ իմացուեր է թէ՝ մէկ «քընձըրմընց» և երկու «արէթկանչօ» ունի, բայց դըժբաղդաբար ի խոստիւղ երկու սարկաւագ գտնուելով և երկուքէն մին անմեղ ըլլալով և իմ գրածիս մէջ յանցաւորին անունը յայտնի դրուած չըլլալով, խեղճ անմեղ սարկաւագին պատիւն ալ փչնցաւ որ վրայ պիտի երթար. ուսոի ի հանդարտութիւն մտաց կուգամ յայտարարել թէ յանցաւորը Տիրացու Սարգիս Պարտիզպանեանը չէ, ուսոի ո՛վ է նէ դուք գտէք։

—

Կը լսեմք թէ Ազգային Պատկառելի Վարչութիւնը Գալաթիոյ Թաղ. Խորհրդոյ երկու տարիէ ի վեր տարած ամենաքանչելի մտատարաբերութեան ի նպաստ իւր համակրութիւնը ցուցընելու առթիւ մտադիր է եղեր վարդքի և ֆերաղի գործողութեանց հոգը կալուածոց հոգաբարձութենէն առնելով, (որոնք թերևս ըստ արժանւոյն իրենց պաշտօնը տանելու կարող չեին) ներկայ Թաղ. Խորհրդոյն յանձնելու։ Տեսո՞ր մի հիմա, դուն բան

ԼՈՅՍ

չունիս նէ պօռայ թէ մեր ազգային դործոց մէջ ուղղութիւն չկայ, անոր համար մարդ ըլլալիք չունինք։

—

Սա ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ի՞նչ ըսինք, տէյ ճակատը դրնրէ ԱԶԳԱՑԻՆ, ԲԱՂԱՔԱՑԿԱՆ և ԲԱՆԱՒՈՐԱԿԱՆ. քանի մը օր իրարու վրայ առի կարդացի և չկըցայ զանազանել թէ վերոյիշեալ նիւթերուն պատասխանող յօդուածները որո՞նք էին. ամա չեռ հաւատար եղեր. ահաւասիկ քեզի օրինակ։ Ա. 1881 սեպտ. 22. թիւ 833. ՏԱՐԻ ԵՐԿՈՏԱՍԱՆ. ԵՐԵՔՇԱԲԹԻ ևն։ Իչիր գիձէն վար, ամենէն վերը. ՆԵՐԲԻՆ. տակը սըրայով կարդա,

— Տրիպօլսէն Աժանս Հավասի կը դրեն թէ՝ Տրիպօլիս ևն։

— Թանի Թունուզի Թղթակիցն ալ հետևեալ տեղեկութիւնները կը հաղորդէ ևն

— Լարիսայէն կը դրեն թէ՝ Հելլենական զօրաց յիշեալ քաղաքը մտնելու օրը, ևն։ Բայց այս տեղ մի մտաներ դիտնալու թէ՝ Լարիսայէն կը դրեն թէ կըսէ նէ, Հայրենիքին չեն դրեր, ուրիչի կը դրեն սէ աս ալ անունսմէ քօքեա կընէ։

— Վօլոյի մէջ ընդամենը երկու Օսմաններան դունդ և քանի մը պատերազմական ևն։

— Խալիմայի սպայներէն Պ. Ունինքլերը ամուսնական խնդրոյ առթիւ ինքզինք սպաններ է։ Աստուած իմ, եթէ ամուսնական խնդիր ունեցող Հայերն ալ Պ. Ունինքլերի պէս մտածէին, օրը 166 հատ Հայ պիտի մեռներ միայն Պօլսոյ մէջ. ուրիչ տեղեր չեմ դիտեր, ինչ է նէ, չարունակենք։

— Թալիա չոգենաւը քաղաքական և պինւորական երկու ևն։

— Թունուզէն ղարնուած հեռագիրները կարդխմաուխ, ևն։

— Կը հաւատան թէ Թունուզի պէյը խել մը ադամդներէ ևն։

— Պուլղարիոյ Աղեկսանդր իշխանը հիւպատոսաց ևն։

— Եէմէնի մէջ ապստամբութիւնը և մաղձացաւը (.) ևն։ երկուքիդ ալ անուններդ գետինն անցնի. . չ. չ. դիները . . ։

— Առողջապահական յանձնաժողովը ևն։

— Ամերիկայի Մուսթաֆա փաշա որ ինազիմ պէյի ևն։

—Կերևի թէ Ալպանիա խաղաղել սկսեր է ևն։ Աստուած տայ ո՛վ չուղեր նէ աչքդ ելլայ։

— Պօսնայի և Հերսէգի բնակիչները յատուկ պատգամաւորութեան մը միջոցաւ խիստ սրտաչարժ ուղերձ մը ղրկեր են, ևն։ ՏԷր Աստուած, ինչ թօհաֆ բան. ես Մասխի մէջ այս ուղերձը տալմիչ եղած կը կարդայի և Հայաստանէն դրուած պիտի կարծէի, մէյ մ՚ալ խելքս դլուխս ժողվելով տեսայ որ Պօսնայի և Հերսէգի ժողովրդեան կողմանէ է եղեր։

—

Հիմա դանք ԱՐՏԱՒինին։ կարդա։

— Փարիզի նախարարութիւնը Ալժերիոյ գործերու մասին խորհուրդ ըրեր. նասիհնալ լրագիրը խորհուրդ կուտայ եղեր կառավարութեան. Ցար ղօրապետը վճռեր է եղեր. Լօժըրօ ղօրապարքը Ռուսթանի տեղ չիտես ինչ եղեր է։

—Տանկիմաքքայի կառավարութիւնը խնացեր է թէ ոչնչականք ևն։ Իբր թէ մեզի փորձանք կը պակսէր, փորձանք մ՚ալ այս ոչնչականները. գարշելիները կարծես թէ հրաչք կը գործեն, իՆչ անիմանալի բաներ . . . ։

— Ամերիկայի նորընտիր նախագահին երդումը։ Սթանտարտի փարիզի Թղթակցին հետևեալ տողերը։ Աղէքսանդր Գ. և Ֆրանսուա Ժոզէֆ կայսերաց տեսակցութեան վրայ եղած կարծիքը. Քօնսթիթիւսիոնել լրագրին ըսածը, Իտալիոյ Հիմպէրթ թագաւորին Աւստրիա ճանրորդութիւնը. Թէլէկռաֆ լրագրին ըսածը։ Փօրթուկալի կամ լիսաբնի թագաւորին ծանուցումը։ Պէլճիքայի Լէօբօլտ Բ. թագաւորին ի Փարիզ ուխտագնացութիւնը։ Նաբլի նախկին թագուհւոյն քարտուղարին խեղդուիլը. Ռուսական և Գերմանական լրագրաց Տանձի կոթին պատմութիւնը։ Ֆրէտերիկ իշխանին թաղման հանդէսը։ Գաղղիոյ խորհրդարանին ձախակողմեան՝ սահմանքնհակառավարակարավարանաց որոշումը։ Գաղղիոյ պատերազմական գործոց նախարարին հրամանը։ Սըր Սթաֆօրտ Նորթքօթի Հիւլի մէջ ըրած ճառախօսութիւնը։ Ռուսիոյ Զարին Տանձի կոթի տեսակցութենէն վերջի հրովարտակները, և Փարիզի գիտութեանց Ակադեմիային աշխարհիս վախճանին համար ըրած ծանուցումը։ Պերէգեռթ վերսին աշխարհիս կործանումը վրայ հասաւ, չենէ մեր Հայրենիքին Արտաքին լուրերը դեռ լմննալիք չունէին։

—

— Հետևարար պիտի կարդանք վերջին լուրերը։

Քանի մը օրե ի վեր Մայրաքաղաքիս տիրած յուրտը Ռուսիայէն ընդող հիւսիսային հողմէն պատճառած է եղեր. սուտ. այս ցուրտին դլխաւոր պատճառը ՔՕՔՕԶՈՒԹԻՒՆՆԻՄ է, որուն տաճկերէն՝ «ալաճադլը աղջը էամէսի» կըսեն։ Վագըմի Շապուռօֆի մասին ըրած դուշակութիւնը, նոյնպէս վագըմի Մաքսային սրոց գինները բարձրացնելու խնդիրը, ևն. ևն. ևն. էն վերջը, հատը բարակ երկու գիծէն եաքը՝ Օսմ. քօնսօլիտէն բացուեցաւ գոցուեցաւ, նորէն բացուեցաւ և ֆիլէթօյով գոցուեցաւ։ Էյ ընթերցող, հիմա դու ալ ինձի հետ պիտի վիճառե՞ս արդեօք թէ՝ առանց մէջը ո՞րն է Ազգայինը կամ բանասիրականը. ես ալ չատ վիճառեցի, բայց բան մը չդտայ. վերջապէս խելքով այսպէս հետևցայ. սա էն վերջի երեսը կարդա։ Ն. ՏԷր Ղևոնդեանց. Մայրենի լեզու։ Ահաւասիկ Ազգայինը։ Կարդա. Սիկաւէի Թղթին ընտրելագոյնն է Ռօպէնեան անուանեալ Պրազիլիոյ Թուղթը։ Ահաւասիկ քեզի Առևարական ալ, որ իր ծանուցումին մէջ չկար։ Կարդա, Ամուսնական առողջաբանութիւն։ Ահա քեզի բժշկական ևս, իլաճն ալ կուզես նէ՝ քիչ մը վերը պատկերով դրուած է՝. փանասէ, որ ամեն տեսակ հիւանդութիւն կը բժշկէ։ Կարդա. կըրթուելիւն Տաճկերէն լեզուի, Պ. Պ. Գալըպճեան, և Անգղիերէն լեզուի ուսուցումն։ Ահա քեզի Գրական, Հայկական Թղթակցաճառանոց և գրատուն Ց. Ց. Զաքըեան։ Ահա քեզի վաճառականական։ Հիմա կուզես բանասիրական։ Արամեան տպարանէն ելած Մինաս Ջերազի ձեռքը գրիչով ու սուրով։ Հիմա թէ որ այս ըսածներս միայն Հայրենիքի համար հասկընաք, մեծ մեղք կը դործէք, ճշմարտութիւնը սա է որ, վերոյիշեալ բոլոր ծանուցմանց տաճկերէնի թարդմանելուդ պէս կըլլայ Թէրճեմանը—էֆքեար, միայն թէ ծայրը Միւթէֆէրրիդայ մը աւելցնելու է. իսկ եթէ Մէնդարեյի Միւլկէ և ասոնց նման խորհրդածութիւններ և կամ Պ. Նիկողոսեանի, Պ. Դելիեանի, Պ. Մ. Գուշարի և Պ. Ա. Մուրատեանի յօդուածոց նման բարով լօխմայ մը խառնես, կըլլայ Մանդումէի Էֆքեար. իսկ Մէճմուայի Հավատիսին ի՛նչ ըսենք ունենալը դեռ աղէկ մը չհասկցանք։ Նոյնպէս վերոյիշեալ խալիպին վրայ աւելցուր Պ. Բ. ի տեսութիւնքը կըլլայ Մասիս. իսկ երբոր կարդաս, «Հաստքէօյտե Թուլլա ձեռքդ առ պէքճիին սօփան կամ թէ կովը խօռասան կուտէ կոր՝ եղաւ Մամուլ, իսկ այս ամենը կարդալու համար եթէ ուշ հասնելնուն մուխը ձեռս, Լոյսը առ և կարդա. Ահաւասիկ, ընթերցող, քեզի ճչգրիտ պատկեր մը մեր ընդհանուր լրագրութեան, ա՛լ քու ձեռքդ է որը կուզես գայն ընտրէ. իսկ թէ որ պատահմամբ կարդալիքներդ հատնի ու լոյսդ մընայ և դեռ կարդալու ախորժակդ ալ տեղը ըլլայ, կարդա նաև իմ կողմանէս յաւելեալ պօշպօղաբաննութիւններն ալ։

Դիշերս մաղաղան նստած էինք չորս հինդ ընկեր. անօթի ընկերիս մէկը դուրսէն անցնող դրացինը սէյիր ընելմ ըսելնէքէն քլուխը տանկ տէյի երկաթէ բեղկին զարնելուն պէս՝ բէժմեղները չվազէ՛ մի, ՏԷր Աստուած, ի՛նչ փորձանք, աման տէրտէրին վազեցէք, չէ բժշկին վազեցէք չէ էզաճիին հասէք ևն. բանընքէն մէյ մըյնալ ի՛նչ տեսանենք, ընկերնիս որուն դլուխը պատռեր էը, խնդալէն մարելու վրայ է, ձո՛ տղայ, ի՞նչ կը խնդաս, ի՞նչ եղաւ քեզի, խենդեցա՞ր, ինչ եղար — օ՛ֆ փառք քեզ Աստուած, դբլուխս սա տեղը 12 տարիէ ի վեր ցաւ մը ունէի որ շարունակ կը բռներ, հիմայ դլուխս տէմիրին ղարնելս արիւն եղնալը և դլխս 12 տարուան ցաւը մէկէն ի մէկ կարելը մէկ եղաւ։ Հա՛ հա՛ հա՛ հի՛ հի՛ հի՛ . . . ։

— Էյ գաիր տեսնեմ, Արքիլօքոս, սա բանին պատճառը գաիր տեսնեմ։

— Ի՞նչ անիմանալի բան, սատ ալ բա՞ն է, ընկերոջս սէյիր ընելմ և երեսը տեսնեմ տէյի վազած և այդ պատճառաւ գլուխը պատռած դրացինը այն օրը Ֆերի գիւղի կիւրճինեըրուն ժամը ուխտի գացեր և անկէ ետ դարձեր է, հետևաբար ընկերս ալ չունեն առնէ մեղքը, ո՞վ գիտէ ի՛նչ սիրտով դուրս վազեց քի մէկէն ի մէկ չարիքըմիշ եղաւ և այն դրացինին վըրայ դանուած ղօրութիւնը երկաթին և երկաթէն ալ ընկերոջս գլխուն փոխանցեցաւ։

Ներեցէք, ՏԷր Խմբադիր տահա չատ գրելիք բաներ ունէի ամմա։ մէյմը երթամ իմիններուս երևամ, ղերէ ուշ ծնացի. ուրիչ անգամ նորէն կը տեսնուինք։

ԱՐՔԻԼՕՔՈՍ

Ոաքի վրայ Ց. Գ.—մեր լրագիրները եթէ իրենց խղճմտանաց դէմ մեղան. չել չեն ուղեր, ես իրենց վերնագիր մը տամ թողլ ըսած այնմ գրեն։ Հոգ չէ թէ իրենց անունը ի՛նչ կուզեն անդնեն, բայց փոխանակ Ազգային փաղաքական և բանասիրական և Առևտրական ևն. խոշոր խոշոր անուններ դնելու որոնց նշանակութիւնը անգամ իրենք ալ երբեմն չեն հասկնար, թող գրեն.—լրագիրհայերէն լեզուաւ կամ հայերէն դրերով տաճկերէն լեզուաւ, որ կը պարունակէ Եւրոպական և Տաճկ լրագրաց թարդմանութիւնները, ասկէ անկէ ժողուրդուած թափթփուքները և չէչիտ ըլլալու համար ասոր անոր խորհրդածութիւնները և լրագիրը լենալու համար՝ գլխիցաւ և անանուն թղթակիցներուս երկար բարակ ու անհամ նամակները ևն։ Եւ կամ թէ բոլորովին բան մը չհասկըցուելու համար մէկէն ըսել «լրագիր Համանիւթ»։

ՆՈՑՆ

Երթալնի.քէն Ց. Գ.

Անցեալ երիկուն կրակ կար, Պէյօղլուցիներուն համար՝ Պալատ, Ղալաթիացիներուն համար Էյիպ, Գումգաբուճիներուն համար Լենճա Սամաթիացիներուն համար Այվասար ևն. իսկ Ինձի համար սրահս մէջ, վասն զի առջի երիկուընէ խաշանին տակը չատ փատ նետած էի։

ՆՈՑՆ

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

—

Հայազդի ճարտար բժիշկ Մեծ. Տօքթ. Ֆ. Մալէզեան էֆէնտի ասկէ ետքն ամենօր և ամեն դիշեր պատրաստ պիտի դըտնուի Լանկա ճատէսի թիւ 110 տուննուր երեն դիմողները պիտի քնդունի և ուզուած տեեն հիւանդաց տունն այցելութեան պիտի երթայ։

Իսկ երեքշաբթի օրերը միայն ձրի պիտի դարմանէ աղքատ հիւանդներն յիշեալ տան մէջ՝ ցորեկուան ժամը 8էն սկսեալ։

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ
ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿ
ՏՕԿԹԷՕՐ Է. ԳԱԼԷՄԱՆ
Բարիզի բժշկական Ճեմարանէն

ԹԱՐԳՄԱՆԵՑ 1877 Ի ՏՊԱԳՐՈՒԹԵՆՆԷՆ
Ե. ԱՐՄԱԻԻՐ

—

Թէ ի՛նչ պէտք է դիտնան ամուսնացողք երեսց ամուսնութեան նախընթաց օրը. — Ինքզինք սիրցնելու միջոցները. — Ամուսնութեան աղդեցութիւնն ամուսնոց թիւղիքականին և բարոյականին վրայ. Ծննդական գործարանաց առողջաբանութիւն. — Անկարողութիւն և իւր դարմանները. ևն. ևն։

Սոյն խիստ օդտակար դիրքը որ թէ ամուսնացելոց և թէ ամուսնութեան պատրաստուողներու ընթերցման անհրաժեշտ է կը ծախուի ամեն գրավաճառի քով. Դին 8 ղուրուշ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ
Ց. Զ.
Ղալաթա, Գարագիւղ Մաքսատան փողոց, Թիւ 16

Սոյն նոր բացուած Թղթավաճառանոցին մէջ կը գտնուին դրասենեակի և Դպրոցական ամեն տեսակ պիտոյք, Հայերէն և օտար լրագիրք, սիկարի թուղթ նաև նորահնար «Նուպեան» քսուած հօշկաներկը, խիստ չափաւոր գիներով։

ԴՐԱՄԱԿԱՆ

Սեպտ. 26/8, 1881

Գոնսոլիտէ 16·28 | Բուլղարկ. բաժինք 49.

ԴՐԱՄԻ, Օսմ. լիրան 100 էն

Մէճիտիէ	107·17	Ռուսիոյ բօլ	89·25
Թղթադրամ	1050	Նաբուլէոն	87· 2
Մէճիտիք	205·	Գրիմիձ	51·
Պէշիք	207·	Անգղ. լիրա	109·12
Ալթընըզ	124·38	Մանէթթղթդր.	3·57

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ
Է. Ե. ԴԻՄԱՔՍԵԱՆ Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏՆՏԵՍԵԱՆ
Սիամպիւլիւ խան Ն· 47